ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից ընդունված ռազմավարությունների եւ քաղաքականությունների ուսումնասիրություն՝ ատելության խոսքի, արմատականացման եւ այլատյացության կանխարգելման դրույթների առկայության մասով

Նկարագրություն

Հայաստանում հետհեղափոխական շրջանում հասարակության մեջ արձանագրվում է ատելության քարոզի, արմատականացման և այլատյացության աճ, որը հակասում է և խոչընդոտում երկրում համերաշխության մթնոլորտի ձեւավորմանը, ներհասարակական ներդաշնակությանը և համագործակցությանը:

Այդ աճը նախեւառաջ դրսեւորվում է դպրոցներում եւ բուհերում միջանձնային փոխհարաբերություններում, սակայն հատկապես վտանգավոր դրսեւորումներ է ստանում առ-ցանց տիրույթում՝ սոցիալական ցանցերում, առ-ցանց լրատվամիջոցներում տեղադրված նյութերի ներքո տեղի ունեցող քննարկումներում: Վերջինի պատճառը ինտերնետի, ուստիեւ՝ հանրային հարթակների օգտագործման հասանելիության ավելացումն է, որը, սակայն, չի ուղեկցվում օգտատերերի մոտ բանավեճի եւ արտահայտման համապատասխան մշակույթի, քննադատական մտածողության զարգացմամբ:

Արդյունքում տարբեր քաղաքական հայացքներ, կրոնական համոզմունքներ, սեռական կողմնորոշում եւ մշակութային/ենթամշակութային պատկանելություն ունեցող խմբերի ներկայացուցիչների կողմից քաղաքակիրթ/քաղաքավարի բանավեճերի փոխարեն հաճախ տեղի է ունենում փոխադարձ բացառման մտայնության հենքով վիրավորական, այլատյաց, ատելության խոսք եւ հայհոյանքներ պարունակող դրսեւորումներ:

Նպատակ

Հայաստանում ատելության քարոզի, արմատականացման և այլատյացության աճը կանգնեցնելու եւ արմատականացման ու այլատյացության ծավալների նվազեցման համար վերհանված խնդիրներից մեկը՝ հանրային վերահսկողությունն ու մոնիթորինգն է ՀՀ պետական ռազմավարությունների եւ քաղաքականությունների՝ երիտասարդության շրջանում արմատականացման եւ ատելության քարոզի բացառման դիտանկյունից:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LAWYERS' ASSOCIATION

FREE CITIZEN
Civic Initiatives' Support Center

Ուսումնասիրության արդյունքներ

Ուսումնասիրության են ենթարկվել 2007թ.-ին ընդունված եւ մինչ օրս գործող «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», «ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը», Երիտասարդության և սպորտի նախարարության ռազմավարական ծրագրերը, «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»:

Ատելության քարոզի բացատրությունները բազմաթիվ են և մենք կառաջնորդվենք Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 97(20) հանձնարարականով, որը հաստատվել է ԵԽ նախարարների կոմիտեի կողմից 2010թ. Հունվարի 20-ին, փոխնախարարների թիվ 1075 հանդիպման ժամանակ[1]: «Ատելության քարոզումը» սահմանում է հետևյալ կերպ՝«Ատելության քարոզում» եզրույթը պետք է հասկանալ, որպես արտահայտման բոլոր ձևերն ընդգրկող երևույթ, որը տարածում է, հրահրում է, խրախուսում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, այլատյացությունը, անտիսեմիտիզմը և ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, այդ թվում՝ ագրեսիվ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների և գաղթական ծագման անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը»:

«ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի»[2] մեջ կրթության բաժնում ատելության դեմ պայքարի մասին ընդհանրապես չի խոսվում: Ոչ մի խոսք չկա կրթական միջավայրում հանդուրժողականության/տոլերանտության ծրագրային նպատակների մասին:

Կրթության բաժնի ուսումնասիրությանը զուգընթաց մշակույթի ոլորտի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ատելության քարոզի դեմ պայքարը պետության ռազմավարության մեջ բացակայում է նաեւ այս ոլորտում: Ավելին՝ զարգացման այս ռազմավարական ծրագրի մեջ ընդհանրապես բացակայում են սպորտն ու երիտասարդությունը: Երիտասարդների մասին ոչ միայն չկա առանձին ենթաբաժին, այլ չկա ընդհանրապես ոչինչ:

[1] https://rm.coe.int/16800cc248
[2] http://www.gov.am/files/docs/1322.pdf

ՀՀ 2011 թվականին անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ Հայաստանում կան շուրջ 11 ազգային փոքրամասնություն կազմող էթնիկ խմբեր՝ 57 000 բնակչությամբ: Եզդիական համայնքը Հայաստանի ամենաբազմամարդ ազգային փոքրամասնությունն է 35.272 (ոչ պաշտոնական տվյալներով՝ 45-50 հազար) բնակչությամբ: Բացի դա, Հայաստանում կան նաեւ կրոնական փոքրամասնություններ՝ կաթոլիկներ, բողոքականներ, հեթանոսներ: Աթեիստների եւ ագնոստիկների թիվը Հայաստանում ըստ 2011թ. մարդահամարի տվյալների՝ կազմում է 1%: Եթե անգամ այս թիվը համապատասխանում է իրականությանը, դա նշանակում է, որ խոսքը գնում է եւս շուրջ 30000 մարդու մասին: Սակայն դժվար է հավաստի համարել այս թիվը, ըստ որի Հայաստանը 70 տարի աթեիզմի ժամանակաշրջանից հետո ընդամենը 20 տարվա ընթացքում դարձել է աշխարհի առավել կրոնամետ երկիրը՝ թողնելով իր ետեւում Գանային՝ 96%, Նիգերիային՝ 93% եւ Ֆիջիին՝ 91%:
«Հայոց եկեղեցու պատմության» դասավանդումը, որն ունի պարտադիր բաղադրիչ, տարածվում է նաև փոքրամասնությունների վրա: Կրթության ռազմավարության և քաղաքականությունների մեջ հաշվի չեն առնվել ազգային եւ կրոնական փոքրամասնությունների, աթեիստների շահերը: 2007թ. մարտի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը: Ըստ որի, Հոդված 18-ում «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Եվ Հայ եկեղեցու պատմություն առարկայի պարտադիր բաղադրիչը ոչ մի կերպ չի բացատրվում ու մեկնաբանվում կրթության ռազմավարությունների մեջ՝ փոքրամասնությունների իրավունքների պահպանման և ազգակենտրոնությամբ, կամ մեկ կրոնին առավելություն տալով՝ նրանց իրավունքների չխախտման համատեքստում:

Այժմ Երիտասարդության և սպորտի նախարարությունը միավորվել է Կրթության նախարարության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (Հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում

Փաստաթղթում իսպառ բացակայում են ատելության խոսքի եւ քարոզի, այլատյացության եւ արմատականացման կանխարգելմանը վերաբերող դրույթներ: Միակ դրույթը որը մոտ է նշված թեմատիկային վերաբերում է հանդուրժողականությանը: Սակայն, այն

ներառված է «Հասարակության բեւեռացում» կետի ներքո եւ լիովին տարբեր համատեքստում.

- **Հասարակության բեւեռացումը.** Սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության մակարդակը, մասնագիտական կրթության, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության մակարդակը, հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը անցումային շրջանի ավանդական մարտահրավերներ են: Թեև Հայաստանի Հանրապետությունը կայուն առաջընթաց է գրանցում այս ուղղություններով, այնուամենայնիվ այդ ոլորտները շարունակում են մնալ բարձր ռիսկայնության դաշտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ[3]-ի մեջ «Ով է հայը» բաժնում նշվում է, որ հայը այն մարդն է, ով էթնիկորեն և ծագմամբ հայ է: Եվ նշված է, որ անձին որպես հայ համարելու պարտադիր նախապայմաններից է. 1.Իրեն հայ համարելը, 2.Մոր հայ լինելը, 3.հոր հայ լինելը 4.Հայ առաքելական եկեղեցու հետևորդ լինելը և այլն: Ազգային բաղադրիչի մեջ են մտնում նաև ՀՀ-ում ապրող ազգային փոքրամասնությունները: ՀՀ երիտասարդության ազգային զեկույցում փոքրամասնությունների մասին ոչ մի խոսք չկա:

Սեռական փոքրամասնությունների վերաբերյալ կա ընդամենը մեկ անդրադարձ մի պարբերության մեջ, որը վերաբերում է ընդհանուր «եվրոպական արժեքներ» հասկացությանը, այն էլ՝ բացասական ենթատեքստով. «Եվրոպական արժեքների նկատմամբ առկա բացասական դիրքորոշումները բոլոր ենթամշակութային խմբերում հավասարաչափ բարձր են: Հարկ է նշել, որ Հայաստանի հասարակությունում և մասնավորապես երիտասարդության շրջանում «եվրոպական արժեքներ» հասկացությունը ստերեոտիպացված է: Երբ ասում են «եվրոպական արժեքներ», ապա հասարակության կողմից դրանք արդեն ընկալվում են որպես սեռական փոքրամասնությունների խնդրի պրովոկացիոն չարչրկում (ի հակադրություն հայկական ավանդական դիրքորոշումների, որոնք այդ հարցում, ի դեպ, բուն քրիստոնեական մոտեցումներ են): Սակայն, իրականում եվրոպական արժեքների բուն էությունը կազմող տարրերը՝ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և ազատ տնտեսությունը (շուկայական տնտեսությունը՝ ի տարբերություն կապիտալիստականի, կամ՝ փոքր բիզնեսը, որով կարող են ազատորեն և օրենքի առջև հավասար իրավունքով զբաղվել բոլորը՝ ի տարբերություն օլիգոպոլ կամ մոնոպոլ տնտեսության), ինչպես ցույց են տվել երիտա¬սարդության շրջանում անցկացված նախկին հետազոտությունները, ընդունելի են հայ երիտասարդության բացարձակ մեծամասնության համար»

[3] http://www.msy.am/files/post/1409305685-1Azgajin_zekuyc_masI.pdf, http://www.msy.am/files/post/1409305707-2Azgayin_zekuyc_masII.pdf

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի»[4] մեջ նշվում է.

1. Առաջիկա տարիների կրթության զարգացման թիրախները, գերակայությունները և գործողությունների շրջանակը միտված են առկա խնդիրների լուծմանը՝ ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով կրթության առաքելության, հայրենասիրական դաստիարակության, որակյալ բովանդակության, **յուրաքանչյուր քաղաքացու ինքնաիրացման հնարավորությունների ապահովման,** պետության առջև կանգնած մարտահրավերների վրա:

Այս ամենը կարդալով պետք է գտնենք յուրաքանչյուր քաղաքացու մասին դրույթներ, որոնք, սակայն, բացակայում են:

Եզրակացություն

Այսպիսով, պետական մակարդակով ռազմավարությունների կազմման գործընթացում անտեսվել է այլ կրոնների ներկայացուցիչների կամ աթեիստների եւ ագնոստիկների, ազգային, մշակութային, սեռական փոքրամասնությունների առկայությունը եւ նրանց շահերը, նրանց հանդեպ հանդուրժողականության արմատավորման եւ ատելության խոսքի բացառման անհրաժեշտությունը: Հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի եւ մշակույթի բացակայության պայմաններում ատելության խոսքը է՛լ ավելի է տարածել՝ գրավելով նորանոր ոլորտներ եւ այժմ հատկապես մեծ չափերի է հասել նաեւ քաղաքական ընդդիմախոսների հանդեպ:

ՀՀ պետական ռազմավորությունների մեջ ընդհանրապես բացակայում է ատելության քարոզի դեմ պայքարի բովանդակություն ունեցող գաղափարներն ու ծրագրային դրույթները և հակառակը, այնտեղ առկա են բազմաթիվ խտրական դրույթներ, որոնք հակասում են թե՛ ՀՀ Սահմանադրության ոգուն, եւ թե՛ ՀՀ միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին:

ՀՀ ռազմավարությունները ուսումնասիրելիս պարզ չի դառնում, թե ռազմավարությունները միտված են նախեւառաջ քաղաքացու ձեւավորմանը, թե հայկական ինքնության պահպանությանը: Վերջինը մոնոէթնիկ հանրապետության պայմաններում բավականին տարօրինակ մոտեցում է, հատուկ ավելի շուտ գաղթօջախներին, այլ ոչ թե անկախ պետություն ունեցող հանրույթին:

[4] https://www.e-draft.am/projects/528/about

Եթե ռազմավարական ծրագրերի մեջ հայը նույնացվում է էթնիկ հայի հետ, ապա պարզ չէ ազգային փոքրամասնությունների տեղն ու դերը, ովքեր եւս ՀՀ քաղաքացիներ են: Երիտասարդության ռազմավարությունները միտված են հայի ձեւավորմանը և ոչ մի կետ գրված չէ ազգային փոքրամասնություններին ներկայացնող երիտասարդների մասին:
«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» մեջ խտրական վերաբերմունք է դրված ազգային փոքրամասնությունների նկատմամբ, քանի որ զարգացման ծրագրի և ոչ մի դրույթում գրված չէ ազգային փոքրամասնությունների մասին:
1. ԹԵ ինչպես է ապահովվելու իրենց կրթության իրացումը, քանի որ ազգային արժեքներն ու մոտեցումները այլ են և ազգակենտրոնությունը ըստ Եվրոպայի խորհրդի թիվ 97 հանձնարարականի նույնպես համարվում է ատելության քարոզ փոքրամասնությունների նկատմամբ:
2. Արդյո՞ք հայրենասիրական դաստիարակությունը խտրականության չի հանգեցնի փոքրամասնությունների նկատմամբ, քանի որ ըստ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ-ի հայը ոչ թե ՀՀ քաղաքացին է, այլ ծագումով ու էթնիկապես հայը:

Հայ եկեղեցու պատմության պարտադիր բաղադրիչը, որը, առավելեւս՝ հաճախ ուղեկցվում է դասաժամերին պարզ կրոնական քարոզով, ակամայից վերածվում է ատելության քարոզ փոքրամասնությունների նկատմամբ, քանի որ նրանք այլ աշակերտների ընկալման մեջ, փաստորեն, դուրս են մղվում ընդհանրական նորմատիվային/պետականորեն սահմանված կարգավիճակից: Ավելին՝ նրանց պարտադրվում է անցնել մի առարկա, որը քարոզում է իրենց կրոնական համոզմունքներին հակասող գաղափարաբանություն՝ խախտելով իրենց խղճի ազատության՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը: Եւ այս խնդիրը եւ դրա լուծման անհրաժեշտությունը որեւէ կերպ չի արտացոլվում ՀՀ պետական ռազմավարություններում եւ քաղաքականություններում:

Բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ առկա ռազմավարական ծրագրերը նպատակ ունեն ոչ թե կերտել են ՀՀ քաղաքացի, ձեւավորել ներհասարակական համերաշխության եւ հանդուրժողականության մթնոլորտ, այլ միտված են ամրապնդելու առանց այն էլ բարձր աստիճան ունեցող ազգակենտրոնությունը, ապահովելու պետության մեջ էթնիկ հայերի բացառիկ դիրքը՝ ի հակադրություն քաղաքացիական արժեքների եւ իրավունքների:

Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի մեջ երիտասարդության մասին որեւէ հիշատակության բացակայությունը ցույց է տալիս, որ պետությունը քաղաքացիների այս շերտին չի ճանաչում որպես Հայաստանի Հանրապետության զարգացման կարեւոր հիմքերից մեկը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՒՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Առաջարկություններ

2017 թվականից հետո Հայաստանում ռազմավարություններ մշակվել են, սակայն նորերը չեն ընդունվել: Քանի որ այժմ հետհեղափոխական Հայաստանում գործընթացները շարունակվում են բարեփոխումների և առկա խնդիրների լուծման համար, անհրաժեշտ ենք համարում.

1. Անհապաղ կերպով վերանայել ՀՀ բոլոր ռազմավարություններն ու քաղաքականությունները և վերացնել պետության կողմից դրանցում խրախուսվող կամ արդարացվող ատելության խոսքն ու քարոզը, այլատյացությունը եւ արմատականացումը:
2. Տալ հստակ սահմանումներ «հայ», «քաղաքացի», «ազգային» բառերին:
3. ՀՀ բոլոր ռազմավարություններում ու քաղաքականություններում ներառել դրույթներ ատելության խոսքի, այլատյացության եւ արմատականացման դեմ պայքարի անհրաժեշտության, հանդուրժողականության եւ ներհասարակական համերաշխության, քաղաքացիական արժեքների սերմանման եւ տարածման անհրաժեշտության վերաբերյալ:
4. ՀՀ նոր ռազմավարություններն ու քաղաքականությունները մշակելիս ներգրավվել այդ գործընթացում քաղաքացիական հասարակության պրոֆիլային կազմակերպություններին եւ անկախ փորձագետների:

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հանուն Հայաստանի երիտասարդության շրջանում արմատականացման, այլատյացության և ատելության քարոզի հաղթահարման» ծրագրի շրջանակներում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ազատ քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LAWYERS' ASSOCIATION

FREE CITIZEN
Civic Initiatives' Support Center